ԾՐԱԳԻՐ

ՏՂԱՐԵՐՔԻ ԵՒ ՆՈՐԱԾԻՆ ՄԱՆԿԱՆ ՖԻԶԻՔԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՆԻՒԹԵՐ ՀԱՒԱՔԵԼՈՒ

I. ԴԱՇՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿ

1) Ո՞ր հասակում է յայտնւում կանանց դաշտանը (լուսինը, ամսականը):

2) Քանի՝ օր է քաշում արիւնահոսութիւնը:

3) Ի՞նչ տեսակ ներքնազգեստներ են գործ ածում արիւնահոսութեան ժամանակ (շո՞ր են կապում սեռական մասերի վրայ, թէ առանձին ներքնազգեստ հագնում), ո՞րքան ժամանակուայ մէջ փոխում են ներքնազգեստը, կապած շորը:

4) Լուանո՞ւմ են արդեօք սեռական մասերը դաշտանի ժամանակ, սա՞ռը թէ տաք ջրով, քանի՞ անգամ օրուայ մէջ կամ ի՞նչ կարգով:

5) Ի՞նչ փոփոխութեան է ենթարկւում կանանց կենցաղավարութիւնը դաշտանի ժամանակ կերակրի, խմելիքի եւ այլն վերաբերութեամբ: Ի՞նչ տեսակ կերակուր եւ խմելիք օգտաւէտ կամ վնասակար են համարում այս դէպքում:

6) Ի՞նչ միջոցների են դիմում, երբ դաշտանը իւր ժամանակին չէ բացւում, օրին. ոտները տաք ջրի մէջ դնել, փորի վրայ տաք քան (горячій компресъ) դնել եւ այլն:

7) Ի՞նչ փոփոխութեան է ենթարկւում կանանց յարա-

բերութիւնը գերդաստանի միւս անդամների հետ, երբ դաշտան են ունենում, օր. քնո՞ւմ են արդեօք իւրեանց ամուսինների հետ միեւնոյն անկողնու մէջ:

8) Նախապաշարմունքներ դաշտանի վերաբերեալ, օրին. կինը այդ ժամանակ կարող է արդե՞օք կերակուր եփել, խմոր հունցել, ալիւր մաղել, հաց թխել, կաթ կթել, եկեղեցի գնալ, հաղորդութիւն առնել եւ այլն, եւ այլն, եւ ի՞նչով են բացատրում այս կամ այն բանը անելը կամ չանելը:

II. ԱՄԼՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

9) Ի՞նչով են բացատրում ամլութիւնը, Աստծու պատի՞ժ են համարում, թէ չարերի գործ կամ առանձին կազմուածքի պակասութիւն։

10) Ի՞նչ բժշկական եւ նախապաշարմունքի միջոցների են դիմում ամուլ կանայք՝ երեխայ ծնելու համար, ո՞ր սրբերին են առաւելութիւն տալիս այս դէպքում:

11) Ի՞նչպէս են վերաբերում դէպի ամուլ կինը գերդաստանի անդամները, ամուսինը եւ ժողովուրդը:

III. ԾՂՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

12) Ո՞ր հասակում են կանայք ամուսնանում, ինչո՞վ են բացատրում դեռահաս աղջկան ամուսնացնելը:

13) Ի՞նչ է անում կինը, երբ առաջին անգամ զգում է իւր յղութիւնը, օր. խաչակնքել երեսին, ծունը դնել, աղօթք անել, ուխտ գնալ, հաց թխել բաժանել հարեւաններին կամ աղքատներին, մատաղ անել եւ այլն:

14) Ի՞նչ փոփոխութեան է ենթարկւում յղի կնոջ կենցաղավարութիւնը եւ ինչ ժամանակ ինչ փոփոխութիւն է տեղի ունենում, օր. կերակրի, խմելիքի, հագնելիքի վերաբերութեամբ եւ այլն:

15) Արդե՞օք յոի կինը որ եւ իցէ միջոց գործ է ածում արգանդի պտուղը հիւանդութիւնից ազատելու համար։

16) Արդե՞օք յղութեան ժամանակամիջոցին փորը տրորում, փորի վրայ շոր կապում եւ այլ միջոցներ գործադրո՞ւմ են եւ ի՞նչ նպատակով:

17) Ի՞նչ կերակուրներ է գործածում յոի կինը առողջ երեխայ ծնելու համար:

18) Ո՞ր կերակուրները եւ խմելիքները մնասակար են համարւում յոի կնոջ համար եւ ի՞նչումն է մնասակարութիւնը:

19) Ի՞նչ նշանակութիւն են տալիս այն հանգամանքին, թէ յոի կինը ինչ ուզէ ուտելու՝ պէտք է տալ եւ ի՞նչպէս են կոչում այդ ցանկութիւնը (օր. կամակ):

20) Ի՞նչ միջոցների է դիմում յոի կինը, որ գեղեցիկ երեխայ ծնի. օր. հարեւաններից ձու գողանալը, որ թշերի մէջ փոս լինի եւ այլն:

21) Ի՞նչ բան մնասակար կամ մեղք են համարում, որ յոի կինը անէ:

22) Արդե՞օք յոի կինը կարող է հաղորդութիւն առնել, թէ չէ եւ ինչ պատճառով:

23) Ո՞ր սրբերը, հրեշտակները կամ ոգիները պահպանում են կամ մնասում յոի կնոջ եւ նրա արգանդի պտուղին եւ ինչ պատճառով:

24) Ի՞նչ սրբերի եւ միջոցների է դիմում յոի կինը իւր արգանդի պտուղը պահպանելու համար չարերից կամ ոգիներից:

25) Ի՞նչով են բացատրում պտուղը վիժելը եւ ինչ միջոցներ են գործածում, որ այս չպատահի:

26) Ի՞նչով են բացատրում տհաս կամ վաղածին մանուկի ծնունդը, ի՞նչից է պատահում ժողովուրդի կարծիքով տհաս երեխայի ծնունդը:

IV. ԾՆՆԴԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

27) Ո՞վքեր են շրջապատում երկունքի ժամանակ յղի կնոջը: Կարո՞ղ է ներկայ լինել ամուսինը կամ ուրիշ տղամարդ նրան օգնելու համար:

28) Ի՞նչ բժշկական կամ նախապաշարմական միջոցների են դիմում ծնունդը հեշտացնելու համար, օր. ման ածել, վախեցնել, մազերը բերանը տալ որցկալու համար, փչել շիշի մէջ, արիւն առնել, դեղեր քսել արտաքին սեռական մասերին, աղօթք կարդալ տալ քահանային նրա գլխի վրայ, թուխտ անել տալ եւ այլն. չե՞ն տրորում կամ ճմլում փորը, սրսկում սառը ջրով երեսը վախեցնելու համար կամ հրացան արձակում նոյն նպատակով, եւ այլն:

29) Ի՞նչ են անում պտուղը անուղիղ դիրք բռնելու ժամանակ:

30) Արդե՞օք դժուար դէպքերում դիմում են մանկաբարձուհիների (акушерка):

31) Սենեակի ո՞ր մասում կատարւում է ծնունդը (մէջտեղում, անկիւնում, թոնրի մօտ եւ այլն):

32) Ինչի՞ վրայ է ծնում կինը. հողի, մոխրի, չոր գետնի, ամուսնու ծնկների վրայ, թէ փոսի կամ առանձին ամանի մէջ:

33) Ի՞նչ տեսակ դիրք է բռնում կինը ծննդաբերութեան միջոցին. այսինքն կողքի վրայ պառկած է լինում, պրպլրզած, թէ չոքած:

34) Արդեօք որեւէ արհեստական կամ նախապաշարմական միջոցների չե՞ն դիմում ընկերքը շուտ հեռացնելու համար եւ ինչ միջոցներ են գործ դնում այս դէպքում, օր. չե՞ն կապում ծննդկանի փորը գոտիով, չե՞ն ստիպում փչել շիշի մէջ, դեղեր չե՞ն տալիս եւ այլն:

35) Ի՞նչ են անում ընկած ընկերքը, թաղո՞ւմ են արդեօք հողի մէջ եւ ո՞րտեղ, թէ չէ տալիս են կենդանիներին ուտելու. ցոյց տալ այս կամ այն վարմունքի պատճառը:

36) Ի՞նչպէս են պահպանում ծննդկանին, ո՞վքեր են

նրան ծառայում, ի՞նչ կերակուր են ուտեցնում, ի՞նչ խմելիք են տալիս նրան, ե՞րբ է լուացում եւ այլն:

37) Արդեօք հիւանդութեան դէպքերը յաճա՞խ են պատահում ծնողկանին: Ի՞նչ տեսակ հիւանդութիւններ են պատահում եւ ինչո՞վ են բժշկում, օր. երբ մէզը կապտում է, ստինքի պտուկները տրաքւում են եւ այլն:

38) Քանի՞ ժամանակ ծնողականը պառկում է անկողնում:

39) Ի՞նչ միջոցների են դիմում ծնողկանին եւ նորածնին չարերից պահպանելու համար:

40) Արդե՞օք ծնողկանը պահում է քառասունք եւ ինչումն է կայանում այդ:

41) Ի՞նչ են անում քառասուն օրը լրանալիս, չե՞ն լողանում եւ լողացնում երեխային մի առանձին ձեւով օրհնած ջրի մէջ, չե՞ն գնում եկեղեցի կարք կատարել տալու, ի՞նչ են տանում իրանց հետ եկեղեցի գնալիս (կաքաւ, հաւ, աղաւնի եւ այլն):

Ը՞ՆՈՐԱԾՆԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

42 Ի՞նչ հեւով եւ ի՞նչ ժամանակ կապում են երեխայի պորտը, ի՞նչ են անում պորտի վերը ընկած մասը (թաղո՞ւմ են գետնում, թէ դէն են քցում, կամ տալիս են կենդանիներին):

43) Ո՞րքան ժամանակ կապած է մնում պորտը:

44) Ի՞նչ միջոցների են դիմում պորտը բորբոքելու ժամանակ:

45) Արդեօք երեխային աղելու սովորութիւնը կա՞յ.— մարմնի ո՞ր մասերն են աղում, թէ աղած ջրի մէջ են լողացնում: քա՞նի ժամանակ աղած է մնում երեխան. ի՞նչով են բացատրում աղելու սովորութիւնը:

46) Ծնելուց յետոյ երեխային ե՞րբ են առաջին անգամ լողացնում, դրանից յետոյ յաճա՞խ են լողացնում, թէ

չէ եւ ի՞նչպիսի ջրում (տա՞ք թէ սառը), խառնո՞ւմ են ջրի հետ որեւիցէ նիւթ եւ ինչի՞ համար:

47) Սովորութիւն կա՞յ արդեօք ուղղելու նորածնի անդամները—ոտները, ձեռները, գլուխը եւ այլն: Նկարագրել անդամները ուղղելու գործիքները:

48) Կա՞յ արդեօք քալուլելու սովորութիւնը, ի՞նչպէս եւ ի՞նչ շորի մէջ են քալուլում, գլուխը ի՞նչպէս են կապում, արդեօք այդ կապելը ի՞նչ ազդեցութիւն է ունենում զանգ ի ձեւի վրայ: Ի՞նչ նշանակութիւն են տալիս գլխի թաշկինակի գոյնին, լցնում են արդե՞օք քալուլի մէջ շոր հող, մոխիր կամ ուրիշ նիւթ եւ ինչո՞ւ համար են այդ անում: Օրը քանի՞ անգամ են քալուլը քանում եւ նորից քալուլում:

49) Քալուլած երեխային ո՞րտեղ են քնացնում, ի՞նչ նշանակութիւն են տալիս երեխային մօր աջ կամ ձախ կողքին քնացնելուն:

50) Քանի՞ օրից յետոյ երեխային սկսում են դնել օրօրոց: Նկարագրել օրօրոցը, լանտիկը կամ ճոճը եւ երեխայի անկողինը: (Եթէ կարելի է նկարներով):

51) Ինչ նշանակութիւն են տալիս օրօրոցից կախած զանազան առարկաներին, վէգին, խխունջներին, հուլունքներին եւ այլն:

52) Ե՞րբ է մայրը ծիծ տալիս երեխային:

53) Ի՞նչով են կերակրում երեխային այն դէպքում, երբ մայրը կաթ չէ ունենում կամ պակաս է լինում, ի՞նչ գործիքով են կերակրում:

54) Ձե՞ն խառնում կաթի հետ ուրիշ նիւթեր, օր. շաքար, ջուր եւ այլն եւ ո՞ր տեսակ կաթի հետ են խառնում:

55) Ո՞ր տեսակ կենդանիների կաթը որպէս երեխայի կերակուր աւելի օգտակար են համարում (իծի, ոչխարի, թէ կովի կաթը). էշի կաթ տալի՞ս են երեխային, թէ չէ եւ ի՞նչ դէպքում:

56) Սովորաբար ո՞րքան ժամանակ են ծիծ տալիս երեխային:

57) Ի՞նչ միջոցների են դիմում երեխային ծծից կըտրելիս:

58) Ի՞նչ հիանդութիւններ է պատահում նորածին երեխային եւ ինչո՞վ են բժշկում, օր. աչքերի, լեզուի եւ մորթի բորբոքումն, պորտի գոգռումն, արիւնահոսութիւն, ուշաթափութիւն եւ այլն:

59) Ի՞նչպէս են երեխային վարժեցնում ոտ ելնելու: (Եկարագրել գործիքները, որոնցով մանգալ են սովորեցնում:)

Ծան. Տեղեկութիւն ժողովելու ժամանակ հարկաւոր է նկարագրել բոլոր այն կերակուրները, որոնք գործադրւում են այս կամ այն դէպքում, բոլոր դեղերը և ինչ նիւթից են նրանք պատրաստւում: Նոյնպէս օգտաւէտ են նկարները:

Ստ. Զելինսկի

Հրատարակիչ՝ Երուանդ Հալայեան